արեւելեան Հայաստանին, բազմանալով Իսուփի ժամանակ։ Նորանից յետոյ Ռաշիդ նշանակեց Եզեդ ի. Մազեադ ի. Զահիդ Շայբանիին, որ գաղթեցրեց Ռերիայ ցեղը (Միջագեաքի) բոլոր կողմերից, այնպէս որ նոքա Հայաստանին տիրեցին. առհասարակ նա հաստատ կարգի տակ դրեց երկիրը, մինչեւ որ խռովութիւնը միանգամայն վերացաւ։

Ռաշիդ ապա դրեց կառավարիչ Աբդուլկարիր ի. Աբդուլհամիդին, Զէյդ ի. Խաթթաբ Ադաուի որդիներից մէկին, որ կը բնակէր Խառանում. նա եկաւ Հայաստան Դիար Մոդարի բնակիչներից բաղկացած գնդով, սակայն մնաց այստեղ միայն 4 ամիս, ապա ամիրապետը նորան հեռացրեց եւ նշանակեց նորա փոխարէն Ֆադլ ի. Իսահեայ ի. Խալիդ Բարմակին։ Ֆադլ եկաւ Հայաստան իւր զօրագնդով, ուղեւորուեցաւ դէպի Բաբէլ-աբուաբ եւ յարձակեցաւ Համազին ամրոցի վերայ, սակայն՝ հալածուելով բնակիչներից՝ հեռացաւ եւ գնաց Իրակ, իւր փոխանորդ նշանակելով Օմար ի. Այուբ Կանանիին եւ ուղարկելով Աբու Սաբահին՝ հարկ ժողովելու երկրից, իսկ Խառանցի Սայիդ ի. Մուհամմեդ Լահաբիին՝ պատերազմելու բնակիչների հետ։ Պարտաւի ժողովուրդը յարձակեցաւ Աբու Սաբահի վերայ եւ սպանեց նորան. Հայաստան ապստամբեցաւ, ուր երեւեցաւ Աբու Մուսլիմ Շարի։

Ֆադլ դրեց Խալիդ ի. Եզեդ ի. Ասայդ Սուլամիին Հայաստանի վերայ, ուղարկելով նորա մօտ Աբդուլմալիք ի. Խալեֆ Հարաշիին 5000 զօրքով հանդերձ, որ ճակատեցաւ Աբու Մուսլիմի հետ Ռոյանում[1], սակայն Աբու Մուսլիմ հալածեց նո-

---

1 Istaxri (Ed. de Goeje, Lugduni, 1870, 206) Ռոյան (الرّويان) կը թուէ Տաբարիստանի քաղաքների շարքում։ Ինագրիս Ռոբան (الروبان) ընթերցումն սխալ է։